ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N1758 - Ա **31 մարտի 2009թ.**

ՆՈՐՔԻ 2-ՐԴ ՓՈՂՈՑԻ Հ.17 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱԿՈԲ ՏԱՃԱՏԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ, ԷԴՎԱՐԴ ՏԱՃԱՏԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել Հակոբ Տաճատի Գրիգորյանի (ծնված 04.01.1950թ.), Էդվարդ Տաճատի Գրիգորյանի (ծնված 21.06.1947թ.) դիմումը: Տեղագրական հանույթի ճշգրտումից պարզվել է, որ Նորքի 2-րդ փողոցի հ. 17 հասցեում ընդհանուր հողամասի մակերեսը փաստացի կազմում է 879.27քմ, որից 624.58քմ մակերեսով հողամասը Հակոբ Տաճատի Գրիգորյանին, Էդվարդ Տաճատի Գրիգորյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասն է (700քմ մակերեսով հողամասից օգտագործվում է 624.58քմ մակերեսով հողամասը): Օրինական հողամասին կից օգտագործվող 254.69քմ մակերեսով հողամասը օրենքի ուժով կարող է փոխանցվել անհատույց սեփականության իրավունքով:

Հաշվի առնելով, որ բնակելի տունը կառուցվել է մինչև 1980 թվականը, 20.05.2003թ. ժառանգության իրավունքի վկայագրերը, Երևանի քաղաքապետարանի «Հողի և ունեցվածքի գործառնություններ» ՊՓԲԸ-ի 24.03.2009թ. հ.20/2-Ե-157 գրությունը, Երևանի քաղաքապետարանի «Քաղաքաշինություն» ՊՓԲԸ-ի 17.03.2009թ. հ.20-Ել-1841 եզրակացությունը, համաձայն որի Նորքի 2-րդ փողոցի հ.17 բնակելի տան զբաղեցրած և դրա սպասարկման համար անհրաժեշտ հողամասը համապատասխանում է ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1, 2, 3 ենթակետերով սահմանված պահանջներին և ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, ղեկավարվելով «Երևան քաղաքում իրավունքը հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխության, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» հ. 2387-Ն որոշմամբ.

1. Վերականգնել Նորքի 2-րդ փողոցի հ. 17 հասցեում գտնվող գույքային միավորների նկատմամբ Հակոբ Տաճատի Գրիգորյանի, Էդվարդ Տաճատի Գրիգորյանի հողօգտագործման իրավունքը բնակելի տան զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 624.58քմ մակերեսով հողամասին կից 254.69քմ մակերեսով հողամասի չափով՝ ճանաչելով նրանց սեփականության իրավունքը 254.69քմ մակերեսով հողամասի և դրա վրա գտնվող շենք-շինությունների նկատմամբ:

2. Շենք-շինությունների մակերեսները ենթակա են ճշտման ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Մարաշ տարածքային ստորաբաժանման կողմից։

3. Հողամասի սահմանները որոշվում են Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության կողմից տրված միասնական գլխավոր հատակագծով։

4. Նորքի 2-րդ փողոցի հ. 17 հասցեի բնակելի տանը տրամադրել հասցե՝ «Նորքի 2-րդ փողոցի հ.17 տուն»։

5. Առաջարկել ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Մարաշ տարածքային ստորաբաժանմանը գրանցել քաղաքացիներ Հակոբ Տաճատի Գրիգորյանի, Էդվարդ Տաճատի Գրիգորյանի սեփականության իրավունքը սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի նկատմամբ, տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական՝ լուծելով գույքագրման արդյունքում հաշվառված անշարժ գույքի խնդիրները։

6. Հանձնարարել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարության պետին՝ սույն որոշման օրինակները 5-օրյա ժամկետում առաքել Նորք-Մարաշ թաղապետարան։

7. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետի վրա։

8. Որոշման կատարման հսկողությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Ա. Սարգսյանի վրա։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ